

ՊԱՏԻՃՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ԷՎՈԼՈՒՑԻԱՆ

Ռոզա Աբրահամյան

Քրեական իրավունքի ամբիոնի դասախոս, ասպիրանտ

Ցանկացած իրավական երևույթ՝ ինստիտուտ կամ նորմ, ունենում է պատմական զարգացման երկար շրջափուլեր, որոնցում զուգատեղվում են սոցիալական, գաղափարական և նորմատիվ իրավական ամրագրման իրական գործընթացները: «Տարբերակման» և «անհատականացման»՝ որպես քրեակատարողական իրավական հասակցությունների ձևավորման ու զարգացման գործընթացների պատմության ուսումնասիրությունից կարող ենք եզրակացնել, որ պատժի կրման պայմանների անհատականացման ու տարբերակման իրավական ինստիտուտները մարդկության պատմության նորագույն շրջանի իրավական երևույթներից են, որովհետև միջնադարում «պենիտենցիար հիմնարկները կատարում էին միայն ահաբեկող գործառույթ և հանցանք կատարած անձի վարքագծի փոփոխման-ուղղման մասին խոսք չէր կարող լինել»¹: Իհարկե դա ճիշտ է, սակայն պետք է նկատի ունենալ, որ, այդուհանդերձ, ազատագրվում պատժատեսակ սահմանելու և կիրառելու պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հնում կիրառվել են տարբերակման և անհատականացման որոշ սկզբունքներ, որոնք հիմք չեն եզրակացնելու, որ մոտեցումը մասնավորապես Հին և Միջնադարյան Հայաստանում կիրառվել են տարբերակման և անհատականացման իրավական ինստիտուտները:

Այս են վկայում Հ. Խաչիկյանի ազատագրվում պատժատեսակի կատարմանը նվիրված պատմաիրավաբանական հետազոտությունները: Այսպես օրինակ, ըստ Հ. Խաչիկյանի, դեռևս մ.թ.ա. I հազարամյակի վերջերին և մ.թ. սկզբին ազատագրվում պատժատեսակի կատարման գործընթացում նկատվում են պատժի կրման պայմանների տարբերակման ու անհատականացման տարրեր, մասնավորապես՝ ազատագրվածներին կարող էին պահել շղթաներով և առանց դրանց, հնարավոր էին պատժի կրման պայմանների փոփոխություններ, գործում էր ազատագրվածների վաղաժամկետ ազատման հնարավորություն՝ համաներում, ներում, փրկագին վճարում և այլ ձևերով: Դատապարտյալներին պահելու վայրերում կային տարբեր պայմաններով խցեր, փոսեր, վանդակներ և այլն: Ընդ որում որոշ տարրեր հետագայում ամրագրվեցին հայկական միջնադարյան դատաստանագրքերում²:

Ուստեսաբան Ս.Վ Բերեգիկովին կարծում էր, որ պատժի կրման պայմանների տարբերակումը, ինչպես նաև ցանկացած այլ իրավական երևույթ սոցիալապես պատճառաբանված են, ինչը նշանակում է, որ հասարակական պահանջմունքները որպես օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններ, պայմանավորում են իրավական ինս-

¹ Березиков С.В., Правовые и организационные аспекты обеспечения эффективности дифференциации условий отбывания наказания в виде лишения свободы в исправительных колониях. Дисс. канд. юрид. наук. 12.00.08. - М.: 2012, էջ 28:

² Տե՛ս Խաչիկյան Ա.Մ., Лишения свободы и актуальные проблемы его исполнения в Республике Армения, Автреф. дисс. док. юрид. наук. 12.00.05. Ереван, 2005. – էջ 13, История применения и правового регулирования наказания в виде лишения свободы в Армении.- Монография, Изд. ЕГУ, Ереван, 2005:

տիտուտի երևան գալը¹: Սակայն բացի դրանից այս հետևությունները մեկ անգամ ևս հաստատում են իրավահարաբերությունների ընդհանուր տեսության այն դրույթը, որ հասարակական հարաբերությունների հիմնական մասը, որպես կանոն, գոյություն է ունեցել որպես օբյեկտիվ իրողություններ՝ թեկուզև չգարգացած, դրվագային, պատահական դրսևորումներով, անկախ դրանց նորմատիվային կարգավորումից, որը օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների ազդեցությամբ վրա է հասնում հետագայում:

Պատմության նոր շրջանում Արևելյան Հայաստանը, հայտնվելով ռուսական կայսրության կազմում, իսկ այնուհետև՝ Խորհրդային Միության, չունեի սեփական ազգային պենիտենցիար համակարգ, հետևաբար այստեղ գործում էին այդ երկրների իրավական համակարգերը: Այս գործոնով պայմանավորված՝ քրեակատարողական համակարգի պատմական զարգացման օրինաչափությունները ընդհանուր էին. «Մինչև XIX դարը օրենսդրական ակտերով պատիժների կատարման տարբերակում նախատեսված չէր: Այդ ժամանակ ձևավորվեցին միայն դրա կիրառման գաղափարական հիմքերը: Իրավական ամրագրում ստացավ հանցագործների ուղղման նպատակը: Առաջադիմական համակարգի գաղափարի ազդեցության տակ ձևավորվեց դատապարտյալի վարքագիծը հաշվի առնող պատժիչ ներգործության չափաբաժանման պրակտիկան: XX դարի ընթացքում պատժի կրման պայմանների տարբերակման զարգացումը կրում էր հակասական բնույթ՝ օրենսդրական մակարդակում ընդլայնումից մինչև ներգործության նշված միջոցի օգտագործումից լրիվ հրաժարվելը: Անցյալ դարի 70-ական թթ. պատժի կատարման տարբերակման կարգավորումը ստացավ կայուն բնույթ: Այդ ինստիտուտի իրավակարգավորումների հիմնական թերություններից ամենից շատ աչքի էին ընկնում պատժի կրման ողջ ընթացքում նշված միջոցների կիրառման մեկանգամյա հնարավորությունը, պայմանների փոփոխմամբ ստեղծված պատժի կրման երկու աստիճանների միջև որևէ կտրուկ տարբերությունների բացակայությունը. վարչակազմի՝ պատժի կրման պայմանները փոխելու իրավունքի, այլ ոչ թե պարտականության առկայությունը: Արդեն 80-ական թթ. հասարակության մեջ տեղի ունեցող ժողովրդավարական ու մարդասիրական բնույթի փոփոխությունների համատեքստում առաջացան պատիժների կատարումը կարգավորող օրենսդրության բարեփոխման նախադրյալներ»²: Հետագա գործընթացները հանգեցրին ոլորտի օրենսդրական բարեփոխումներին, որոնց համար մեթոդաբանական կողմնորոշիչ գործոններ էին միջազգային իրավական փաստաթղթերը և միջազգային կազմակերպությունների խորհրդատվությունները:

Անկախացումից հետո Հայաստանի Հանրապետության հասարակական կյանքի ժողովրդավարացման և մարդու իրավունքների լիարժեք իրավական հայեցակարգի որդեգրման ազդեցության տակ տեղի ունեցող իրավական խորը բարեփոխումների ուղղություններից մեկը դարձավ քրեակատարողական քաղաքականության վերանայումը և օրենսդրության բարեփոխումները: Այդ համատեքստում 2004 թ. դեկտեմբերի 24-ին ընդունվեց Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրքը, որը ակնհայտ նվաճում էր. առաջին անգամ նորմատիվ-օրենսդրական մակարդակում ամրագրվեցին քրեակատարողական օրենսդրության սկզբունքները, որոնք մինչ այդ միայն քրեակատարողական իրավունքի գիտության հետազոտման նյութ էին, սակայն ոչ օրենսդրական կարգավորման առարկա:

¹ Շստ Ս.Վ. Բերեզիկովի՝ XIX դարում պատիժների կատարման տարբերակման ներդրմանը դրդեցին հասարակական պահանջումները, որոնք ձևավորվել էին պատժի՝ որպես ահաբեկող միջոցի ձգնաժամի, ինչպես նաև հանցագործի վարքագծի վրա պատժի կրման պայմանների փոփոխմամբ և ներգործության միջոցներով դրական փոփոխությունների հասնելու մասին հայեցակարգերի առաջ գալու համատեքստում (Տե՛ս **Березиков С.В.**, Правовые и организационные аспекты обеспечения эффективности дифференциации условий отбывания наказания в виде лишения свободы в исправительных колониях. Дисс. канд. юрид. наук. 12.00.08. - М.: 2012, էջ 41):

² Տե՛ս նույն տեղում:

Քրեակատարողական օրենսդրության սկզբունքների՝ օրենսդրական ամրագրման իրավական տեխնիկայի վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրքը իրավատեխնիկական և բովանդակային որոշակի առավելությունների ուներ Ռուսաստանի Ղաշնության համանուն, 1996 թ. ընդունված օրենսգրքի համեմատ¹: Եթե Ռուսաստանի Ղաշնության քրեակատարողական օրենսգիրքը 8-րդ հոդվածում միայն թվարկում էր քրեակատարողական օրենսդրության սկզբունքները², ապա Հայաստանի Հանրապետության 2004 թ. քրեակատարողական օրենսգիրքը, 5-րդ հոդվածում թվարկելով այդ սկզբունքները (մարդասիրության, օրինականության, օրենքի առջև դատապարտյալների հավասարության, պատիժների կատարումը տարբերակելու և անհատականացնելու, պատիժների և ուղղման միջոցների զուգակցման), միաժամանակ օրենսգրքի հաջորդ 6-10-րդ հոդվածներում ամրագրում էր այդ սկզբունքների իրավական բովանդակությունը կամ նորմատիվ պահանջները³:

Այն հանգամանքը, որ Ռուսաստանի Ղաշնության քրեակատարողական օրենսգիրքը չէր ամրագրում քննարկման առարկա և այլ սկզբունքների բովանդակությունը, չի նշանակում, որ այն ուներ թերություն, իսկ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի դեպքում դա ակնհայտ առավելություն էր: Ռուսաստանի Ղաշնությունում քրեակատարողական իրավունքի տեսության բավականին զարգացած լինելու պարագայում, չնայած որոշ հեղինակների այն կարծիքին, որ արդեն կար կուտակված բավականին փորձ, որ կարելի էր օրենսդրորեն ձևակերպել քրեակատարողական իրավունքի սկզբունքների բովանդակությունը (սահմանումը)⁴, այդուհանդերձ տեսաբանների մեծ մասը, բացասական գնահատելով այդ ամրագրման բացը, չէին կարծում, որ տեսության մեջ կան այնքան ամբողջական մոտեցումներ, որոնք հնարավորություն են տալիս դա ամրագրել: Այս փաստը հաստատում է, որ քրեակատարողական իրավունքի տեսության մեջ դեռևս չկան միանշանակ մոտեցումներ յուրաքանչյուր սկզբունքի բովանդակության վերաբերյալ⁵: Եթե այս տեսանկյունից մոտենանք Հայաստանի Հանրապետության և՛ հին, և՛ նոր քրեակատարողական օրենսգրքերում այդ սկզբունքների և՛ շրջանակի, և՛ բովանդակության ամրագրմանը, ապա դա ինքնին կարելի է համարել ողջունելի իրավական երևույթ: Սակայն որևէ սկզբունքի խոցելի հասկացության ամրագրումն ավելի շատ է առաջացնելու տեսական մոլորություններ, քան նպաստելու է գիտական բանավեճերի հաղթահարմանը:

2022 թ. հունիսի 15-ին ընդունված ՀՀ քրեակատարողական նոր օրենսգիրքը կատարելագործեց քրեակատարողական օրենսդրության մեջ քրեակատարողական իրավունքի սկզբունքների ամրագրման ու իրավական կարգավորման իրավաբանական տեխնիկան՝ նախ այդ հարաբերությունների կարգավորմանը հատկացնելով առանձին 2-րդ գլուխը, որի 5-8-րդ հոդվածներն ամրագրում են համապա-

¹ Ст'у Уголовно-исполнительный кодекс Российской Федерации. Концепция и основные положения. Сопоставительный текст. Постатейные комментарии к новеллам /В. И. Селивестров, И. В. Шмаров, Л. В. Яковлева. –М: - Юрист, 1997, էջ 49:

² Պետք է նկատի ունենալ, որ քրեակատարողական իրավունքի հիմնական սկզբունքների թվարկումը ՌԴ քրեակատարողական օրենսգրքում ոլորտի տեսաբանները գնահատում են բավականին դրական, որովհետև օրենքում առաջին անգամ ամրագրվեց դրանց համակարգը, թեկուզև առանց հատկանիշների բացահայտման (տե՛ս **Шмаров И.В.**, Проблемы общей теории уголовно-исполнительного права в связи с принятием уголовно-исполнительного кодекса России //Проблемы реформирования уголовно-исполнительной системы и подготовки персонала. Материалы международной научно-практической конференции (май 1997г.)- Рязань: РИПЭ МВД России, 1998. էջ 21):

³ Ст'у Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրք, ընդունված է 2004 թ. դեկտեմբերի 24-ին //սկզբնաղբյուրը ՀՀՊՏ, 2005.01.31/8(380), հոդ. 157:

⁴ Ст'у **Лесниевски-Костарева Т.А.**, Дифференциация уголовной ответственности. Теория и законодательная практика. М.: НОРМА, 2000. էջ 99:

⁵ Ст'у **Шмаров И.В.**, նշված աշխատությունը, էջ 21:

տասխանաբար հետևյալ իրավական սկզբունքների իրավական բովանդակությունը՝ մարդասիրություն, օրենքի առջև դատապարտյալների հավասարության և խտրականության արգելքի, պատիժների կատարման և քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառման տարբերակում և անհատականացում, դատապարտյալի վերատոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման հիմնական միջոցների կիրառման համաչափություն և պիտանիություն¹:

Խնդրո առարկա հարցի տեսանկյունից երկու օրենսգրքերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք միայն քրեակատարողական օրենսդրության սկզբունքների օրենսդրական ամրագրման տեխնիկայով չէ, որ տարբերվում են, այլ կան նաև բովանդակային տարբերություններ, մասնավորապես՝ սկզբունքների շրջանակի, անվանումների (վերտառությունների), ինչպես նաև իրավական բովանդակության հարցում²: Օրինակ, եթե 2004 թ. քրեակատարողական օրենսգրքը մեզ հետաքրքրող սկզբունքը կոչում էր «պատժի կատարումը տարբերակելու և անհատականացնելու» (հոդված 9), ապա 2022 թ. քրեակատարողական օրենսգրքում այն վերանվանվել է «Պատիժների կատարման և քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառման տարբերակման և անհատականացման»: Ընդ որում փոփոխվել է ոչ միայն սկզբունքի վերտառությունը (հոդված 7), այլև բուն բովանդակությունը:

Այսպիսով, քրեակատարողական օրենսդրության նոր կողմֆիկացիայի շնորհիվ քրեական պատիժների կատարման տարբերակման ու անհատականացման որպես սկզբունքի բովանդակության, ինչպես նաև դրա կենսագործման կառուցակարգերի ու երաշխիքների համակարգում արվել են էական նորամուծություններ ու բարեփոխումներ, որոնք տեսական հետազոտման ու իմաստավորման կարիք ունեն:

Քրեակատարողական իրավունքի սկզբունքների, ներառյալ պատիժների կատարման տարբերակման ու անհատականացման վերաբերյալ վերը նշված նորամուծությունների հետազոտման անհրաժեշտությունից բացի՝ գոյություն ունի նաև այդ թեմայի արդիականության ու հրատապության մեկ այլ առում, որն առաջ է բերում նոր օրենսդրական կարգավորման պայմաններում հիմնահարցերի մշակման աստիճանի համատեքստում տեսական ամփոփումներ կատարելու անհրաժեշտություն: Խնդիրն այն է, որ խորհրդային քրեակատարողական օրենսդրությունը իր գարգացման ողջ ընթացքում չէր օգտագործում «քրեակատարողական օրենսդրության սկզբունք» հասկացությունը, իսկ Ռուսաստանի Դաշնության գործող քրեակատարողական օրենսգրքը, ընդամենը թվարկելով այդ սկզբունքները, չի բացում

¹ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրք, ընդունված է 2022 թ. հունիսի 16-ին, ՀՕ-246-Ն, //սկզբնաղբյուրը <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164938>:

² Այսպես օրինակ՝ սկզբունքների շրջանակից դուրս է մնացել օրինականությունը, ինչն իրավունքի տեսության և դրան համապատասխանող իրավաբանական տեխնիկայի տեսանկյունից ավել ճիշտ ու հետևողական մոտեցում է: Իրավունքի արդի տեսությունն իրավական օրինականության սկզբունքը դիտարկում է ոչ թե ճյուղային կամ նույնիսկ միջճյուղային սկզբունք, այլ որպես իրավունքի կազմավորման և գործողության համընդհանուր, համատարած, համաիրավական սկզբունք (Տե՛ս **Мухаев Р.Т.**, Теория государства и права. М., Издательство ПРИОР, 2001, էջ 439; **Шабуров А.С.**, Законность и правопорядок.- В кн. Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., Издательская группа ИНФРА . М-НОРМА, 1997, էջ 438, **Չաղարշյան Ա.**, Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություն /ԵՊՀ.- Եր., Հեղինակային հրատարակություն, 2017, էջեր 45-64, 356-369): Ընդ որում որոշ տեսական մոտեցումներում օրինականությունը կամ իրավական օրինականությունը համարվում է «սկզբունքների սկզբունք» (Տե՛ս **Казинян Г.С.**, Актуальные проблемы уголовно-процессуального законодательства в третьей республике Армения (сравнительно-правовое исследование). Автореф. дисс... док. юрид. наук.: М., 2000, էջ 46, **Ղազինյան Գ.Ա.**, Քրեական դատավարության պատմական և արդի հիմնահարցերը Հայաստանում: Եր., Երևանի համալս. հրատ., 2001, էջ 212:

դրանց իրավական բովանդակությունը: Այն հանգամանքը, որ քրեակատարողական իրավունքի սկզբունքները խորհրդային իրավական համակարգում չունեին օրենսդրական ամրագրում, քրեակատարողական իրավունքի գիտության մեջ առաջ բերեց այդ իրավունքի ճյուղի սկզբունքների շրջանակի, տեսակների, բովանդակության և դրանց հետ կապված այլ հիմնահարցերի վերաբերյալ բազմաթիվ, երբեմն իրարից էականորեն տարբերվող տեսական մոտեցումներ: Ընդ որում ասվածը վերաբերում է նաև քրեակատարողական իրավունքի գրեթե բոլոր, ներառյալ «պատժի կատարումը տարբերակելու ու անհատականացնելու» սկզբունքին:

Այսպիսով, հետազոտության առարկայի օրենսդրական կարգավորման նորամուծությունների, ինչպես նաև դրանց վերաբերյալ տեսական մոտեցումների բազմազանության ու ոչ միանշանակության պայմաններում առաջանում է խնդրո առարկա սկզբունքի իրավական բնույթի և բովանդակության, դրա՝ միմյանց, ինչպես նաև այլ սկզբունքների հետ բովանդակային ու համակարգային հարաբերակցության հետազոտման անհրաժեշտություն: Այդ իսկ պատճառով հետազոտման առարկա են դիտարկվում տարբերակման ու անհատականացման՝ որպես սկզբունքի իրավական բնույթը և բովանդակությունը:

Չնայած քրեակատարողական օրենսդրության տարբերակման և անհատականացման սկզբունքի օրենսդրական ամրագրումն ունի ընդամենը շուրջ երկու տասնամյակի պատմություն, բայց քրեակատարողական իրավունքի տեսության մեջ արդեն վաղուց դրանք քննարկվում են սկզբում որպես իրավական գաղափարներ, իսկ այնուհետև՝ որպես քրեակատարողական ոլորտի իրավական սկզբունք: Դա պայմանավորված էր այն գործոնով, որ նորագույն շրջանի քրեակատարողական համակարգը նորմատիվ կարգավորման մակարդակում կառուցված էր այդ սկզբունքի որոշակի պահանջների կենսագործման վրա, սակայն բուն սկզբունքը չունեի օրենսդրական ամրագրում¹: Այսպես, օրինակ՝ և՛ Խորհրդային Ռուսաստանի 1970 թ., և՛ Խորհրդային Հայաստանի 1971 թ. Ուղղիչ-աշխատանքային օրենսգրքերն ամրագրում էին պատժի կրման պայմանների փոփոխում՝ ուղղիչ հիմնարկի ռեժիմի փոփոխմանն ձևով: Դատապարտյալը կարող էր բանտից տեղափոխվել ուղղիչ-աշխատանքային գաղութ, ուղղիչ-աշխատանքային հատուկ ռեժիմի գաղութից՝ խիստ ռեժիմի ուղղիչ-աշխատանքային գաղութ, ընդհանուր, ուժեղացված և խիստ ռեժիմի ուղղիչ-աշխատանքային գաղութից՝ գաղութ-բնակավայր: Մեկ ուղղիչ-աշխատանքային հիմնարկի շրջանակում պայմանները կարող էին փոփոխվել դատապարտյալին խցային տիպի շինությունից սովորական բնակելի կացարան տեղափոխելով, դատապարտյալին պատժի կրման մեղմ պայմաններ տրամադրելը կամ դրանք վերացնելը: Այդ օրենսգրքերը, պայմանների բարելավումից բացի, նախատեսում էին դրանց վատթարացում²:

Նշված սկզբունքի տեսական հետազոտման վաղեմությունն այդուհանդերձ չի հանգեցրել դրա տեսական ըմբռնման ու կենսագործման կառուցակարգերի վերա-

¹ Իրավունքի տեսության մեջ իրավունքի սկզբունքների դասակարգման չափանիշ է նաև նորմատիվ ակտերում ամրագրվածությունը, որին համապատասխան դրանք լինում են նորմ-սկզբունքներ և նորմերից բխող սկզբունքներ: Եթե սկզբունքը հիմնավորվել է գիտության կողմից, սակայն դեռ չունի իրավական կարգավորում, ապա այն ընդամենը իրավագիտակցության մաս է, բայց ոչ իրավական դրույթ: Սակայն իրավունքի սկզբունքների իրավական բնույթը չպետք է մեկնաբանել որպես սկզբունքների օրենքում տառացիորեն ամրագրված լինելու հանգամանք: Սկզբունքի բովանդակությունը օրենքում կարող է դրսևորվել փաստացի, սակայն բուն սկզբունքը կարող է չունենալ տեքստային արտահայտություն: Նշված սկզբունքը վերացարկման միջոցով բխեցվում է գործող իրավանորմերի բովանդակությունից (Տե՛ս **Վաղարշյան Ա.**, Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություն /ԵՊՀ.- Եր., Հեղինակային հրատարկություն, 2011, էջ 47, 52):

² Տե՛ս Исправительно-трудоустрой кодекс РСФСР 1970: С постатейными материалами.- М.: Юрид. лит., 1986, էջ 112; Исправительно-трудоустрой кодекс Армянской ССР. Изд. «АЙАСТАН», Ереван, 1988, էջ 165:

բերյալ միանշանակ լուծումների: Բուն քրեակատարողական իմաստով տարբերակման սկզբունքի բովանդակության իրավական բնույթի և ոլորտի այլ սկզբունքների հետ հարաբերակցության բազմաթիվ հիմնահարցերում քրեակատարողական իրավունքի տեսաբանների շրջանում առկա են բազում տարածայնություններ, երբեմն նաև՝ իրարամերժ մոտեցումներ: Այդ բանավեճը որոշ մասով ուղղված է նաև անհատականացման սկզբունքի տեսական հիմնահարցերին: Տեսական կարծիքների այդպիսի բազմազանությանը և բանավեճին նպաստող պատճառներից մեկն էլ տարբերակման ու անհատականացման բուն սկզբունքի իրավական բովանդակության ու նորմատիվ պահանջների օրենսդրական ամրագրման բացն էր: Իհարկե, ինչպես ՀՀ 2004 թ., այնպես էլ 2022 թ. քրեակատարողական օրենսգրքերն ամրագրեցին քննարկվող սկզբունքի նորմատիվ բովանդակությունը: Սակայն այդ փաստը չէր կարող վերջ դնել տեսական բանավեճերին քրեակատարողական իրավունքի գիտության մեջ, որովհետև իրավագիտությունը երբեմն ավանդաբար շարունակում է զարգանալ արդեն իսկ առկա տեսական մոտեցումների շրջանակներում՝ երբեմն շրջանցելով օրենսդրական ամրագրման փաստը, ինչն ակնհայտ է հատկապես այն տեսաբանների դեպքում, որոնց գիտական պատկերացումները նշված սկզբունքի վերաբերյալ չեն համապատասխանում դրա նորմատիվ-իրավական ամրագրում ունեցող բովանդակությանը:

Այսպիսով, նույնիսկ պատիժների կատարման տարբերակման, ինչպես նաև անհատականացման հիմնահարցի գրեթե հարյուրամյա գիտական հետազոտության պայմաններում¹ արդի շրջանում առաջ են քաշվում քրեակատարողական իմաստով տարբերակման և անհատականացման սկզբունքի հետազոտական նոր ուղղություններ: Այսպես Ա.Դ. Նեչաևը 2017 թ. հրատարակած գիտական հոդվածում առաջարկում է պատիժների կատարման տարբերակման հետագա հետազոտման բավականին հիմնարար ուղղություններ: Այս տեսաբանը, պատիժների կատարման տարբերակումը համարելով բավականին բարդ խնդիր, գտնում է, որ դրա հետազոտական սահմանները դրվել են անցյալ դարի 70-ական թվականներին ռուս հետազոտողներ Ն.Ա. Ստրուչկովի և Մ.Պ. Մելենտևի կողմից²: Չնայած այդ հիմնարար հետազոտություններին՝ բանավեճերը քրեակատարողական իրավունքի տեսության մեջ չեն դադարել, հետևաբար Ա.Դ. Նեչաևն առաջարկում է տարբերակման տեսության զարգացման մի քանի ուղղություններ, մասնավորապես՝ պատիժների կատարման տարբերակման և անհատական միասնական հասկացության մշակում, քրեաիրավական և քրեակատարողական իրավական տարբերակման սահմանների հարաբերակցության իմաստավորում, տարբերակման որպես ազատագրված կատարման սկզբունքի տեսական հետազոտման ուղղությամբ միակողմանիության հաղթահարում և այլն³:

Մեկ այլ տեսաբան՝ Ս.Վ. Չուբրակովը, ամփոփելով տեսական գրականության մեջ եղած մոտեցումները, մատնանշում է պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքի տեսական իմաստավորման ոլորտի մի շարք բացեր և չլուծված հիմնահարցեր՝ դիտարկելով դրանք որպես հետագա հետազոտական ուղղություններ, փորձում է նաև վեր հանել նման իրավիճակի պատ-

¹ Տե՛ս օրինակ **Гернет М.Н.** История царской тюрьмы. / В 5-ти томах. Т. 1. М.: Госюриздат, 1951, էջ 327, **Карпец И.И.** Индивидуализация наказания.- М.: Госюриздат, 1961. էջ 143, **Мелентьев М.П., Бажанов О.И.** Изменение условий содержания осужденных в ИТУ: Лекция. Рязань: Ряз. высш. шк. МВД СССР, 1975 էջ 34, **Наташев А.Е.** Принципы советского исправительно - трудового права.- М.: ВНИИ МВД СССР, 1972 էջ 40, **Стручков Н.А., Брызгалов В.Н.** Классификация осужденных: к лишению свободы и определение им; вида исправительно-трудовой колонии. Киев, 1967 էջ 110:

² Տե՛ս **Нечаев А.Д.**, Перспективы исследования дифференциации исполнения наказания как метод уголовно-исполнительной политики. Уголовно-исполнительное право. 2017. Т. 25(1-4), № 12, էջ 125-129:

³ Տե՛ս **Нечаев А.Д.**, նշված աշխատությունը, էջ 125:

ճառները¹: Նրա կարծիքով, մինչ այժմ չի ձևավորվել բավականին հստակ մոտեցումներ մի շարք հիմնահարցերում՝ մասնավորապես՝ պատիժների կատարման տարբերակումը և անհատականացումը երկու ինքնուրույն սկզբունքներ են, թե՞ երկու տարրից բաղկացած միասնական սկզբունք. այդ սկզբունքները ճյուղային², թե՞ միջճյուղային բնույթ ունեն. որո՞նք են տարբերակման և անհատականացման տարբերությունները, և ինչպիսի՞ն են դրանց սահմանները և փոխհարաբերությունը. ինչպիսի՞ն է այդ սկզբունքների հարաբերակցությունը պատժի նշանակման քրեաիրավական տարբերակման և անհատականացման հետ³:

Քրեակատարողական հետազոտություններ իրականացնող տեսաբաններն առաջ են քաշում նաև բուն անհատականացման սկզբունքի տեսականորեն չլուծված մի շարք հիմնահարցեր՝ նախանշելով դրանց հետագա մշակումների ուղղությունները: Մասնավորապես, Մ.Ա. Կիրիլովը քրեակատարողական իմաստով պատիժների կատարման անհատականացման սկզբունքին նվիրված հոդվածում արձանագրում է, որ մասնագիտական գրականության մեջ չկա հստակ պատկերացում պատիժների կատարման անհատականացման սկզբունքի ձևակերպման (իրավական բովանդակության), ինչպես նաև քրեակատարողական իրավունքում դրա գործողության ծավալների (կամ ոլորտների) վերաբերյալ³:

Այս քննությունների արդյունքների հիման վրա՝ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել երկու գործառնական ենթադրություններ.

1) քրեական պատիժների տարբերակումը և անհատականացումը դիտարկվում են որպես քրեակատարողական իրավունքի ոլորտում առանձին կամ ինքնուրույն, սակայն սերտորեն փոխկապված միջճյուղային իրավական սկզբունքը՝ չնայած գրականության մեջ եղած տարատեսակ մոտեցումներին այդ սկզբունքի (կամ սկզբունքների) ճյուղային կամ միջճյուղային պատկանելիության վերաբերյալ⁴:

¹ Շտո Ս.Վ. Չուբրակովի, «Դա մասնակիորեն բացատրվում է նրանով, որ դիրքորոշումների մեծ մասն արտահայտված է ուսումնական գրականության մեջ, որը չի հետապնդում հարցի խորը գիտական մշակում: Սակայն դա չի արդարացնում ընդհանուր անփաստարկ բազմազանությունը և սուբյեկտիվիզմը «ես այդպես եմ մտածում» մակարդակով: Բացի այդ՝ երբեմն որևէ հեղինակի տեքստը բառացիորեն վերաարտադրվում է մյուսի կողմից նույնիսկ առանց հղում կատարելու: Այդ պատճառով ոչ նախկինում, ոչ էլ հիմա չկա քրեակատարողական սկզբունքների հետ կապված ոչ միայն առանձին հարցերի, այլև դրանց ողջ համալիրի հասկացման վերաբերյալ կայացած մոտեցում: Արդյունքում ամեն մի հեղինակ ունի իր սեփական տարբերվող կարծիքը սկզբունքների բնորոշման, դրանց դասակարգման և տեսակների, բովանդակության վերաբերյալ: Դա թույլ չի տալիս պնդել, որ օրենսդրի և իրավակիրառողի համար այդպիսի կարևոր խնդիրն ունի պատշաճ գիտական լուծում» (Չубраков С.В., Проблема принципов в уголовно-исполнительном праве: история и современность /под ред. В.А. Уткина. – Томск : Издательский Дом ТГУ, 2015, էջ 88):

² Բացի վերը թվարկված գիտականորեն չլուծված խնդիրներից՝ Ս.Վ. Չուբրակովն առաջ է քաշում նաև մի շարք տեսական չլուծված այլ հիմնահարցեր տարբերակման և անհատականացման տեսության ոլորտում: Այդ մասին մանրամասն տե՛ս Չубраков С.В. Дифференциация и индивидуализация исполнения наказания как принцип уголовно-исполнительного права: проблема интерпретации в современной науке. Уголовная юстиция (russian journal of criminal law), 2014, № 2(4) էջ 53-58:

³ Տե՛ս Кириллов М.А., О принципе индивидуализации исполнения наказания в уголовно-исполнительном законодательстве Российской Федерации. Отраслевые проблемы юридической науки и практики. Вестник Нижегородской академии МВД России, 2015, № 1(29), էջ 101-103:

⁴ Տե՛ս Павлов И.Н., Принцип дифференциации и индивидуализации исполнения наказаний в уголовно-исполнительном праве. Специальность 12.00.08. Дисс. кандидата юридических наук. Москва, 2011, էջ 16-32; Чубраков С.В. Дифференциация и индивидуализация исполнения наказания как принцип уголовно-исполнительного права: проблема интерпретации в современной науке. Уголовная юстиция (russian journal of criminal law), 2014, № 2(4) էջ 53-58; Стручков Н.А., Курс и справительно-трудового права: Проблемы особенной

Այդուհանդերձ, գիտամեթոդաբանական առումով ավելի ճիշտ մոտեցում է այն տեսակետը, որը պատիժների կատարման տարբերակումը և անհատականացումը դիտարկում են որպես քրեական, քրեադատավարության և քրեակատարողական իրավունքների բնորոշ միջճյուղային իրավական սկզբունք, որովհետև այն, ըստ էության, լրիվ համապատասխանում է իրավունքի սկզբունքների ընդհանուր տեսության բավականին խորը մշակված հիմնադրույթներին¹:

2) Քրեակատարողական իրավունքի տեսության մեջ դեռևս բացակայում է փոխհամաձայնություն կամ հանրաձանաչություն խնդրո առարկա սկզբունքի անվանման շուրջ, ընդ որում այդ հանգամանքը նաև օրենսդրության համապատասխան ձևակերպումներում: Տեսական գրականության մեջ առավել տարածված են պատիժների կատարման տարբերակման սկզբունք և պատիժների կատարման անհատականացման սկզբունք (որպես ինքնուրույն սկզբունքներ) կամ պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունք (որպես միասնական) անվանումները:

Պատիժների կատարման տարբերակման և անհատականացման՝ որպես քրեակատարողական գործունեության սկզբունքի ձևավորման ու օրենսդրական ամրագրման էվոլուցիայի քննարկումը հիմք է տալիս եզրակացնելու, որ մինչև նորագույն շրջանը ազատագրված որպես պատժատեսակի սահմանման ու կիրառման գործընթացում նկատվում են տարբերակման և անհատականացման դրվագային դրսևորումներ, որոնք, լինելով եզակի, հիմք չեն տալիս պնդելու, որ դրանք բնութագրական էին պենիտենցիար քաղաքականությանը: 2004 թ. ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը առաջին անգամ օրենսդրական մակարդակում ամրագրեց քրեակատարողական օրենսդրության սկզբունքները՝ դրանց շրջանակը և իրավական բովանդակությունը: 2022 թ. ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը կատարելագործեց այդ սկզբունքների ամրագրման իրավաբանական տեխնիկան, վերանայեց դրանց շրջանակը, անվանումները (վերտառությունները), ինչպես նաև յուրաքանչյուրի իրավական բովանդակությունը:

части. М., 1984. էջ 78-89, Уголовно-исполнительное право: В 2 т., Т. 1: Общая часть /Под общ. ред. Ю.И. Калинина. – 2-е изд., испр. и доп.- М.: Рязань: Логос; Академия права и управления федеральной службы исполнения наказаний, 2006. էջ 183-213, Уголовно-исполнительное право России /Под ред. проф. В.И. Селиверстова. – 2-е изд., перераб. и доп. – М.: Юристъ, 2000, էջ 25-31:

¹ Իրավունքի ընդհանուր տեսության մեջ առկա են իրավունքի սկզբունքների բազմաթիվ դասակարգումներ: Օրինակ՝ դրանք բաժանում են բարոյաէթիկական և կազմակերպական սկզբունքների (Տե՛ս **Байтин М.И.**, Сущность права (Современное нормативное правопонимание на грани двух веков), М., изд. 2-ое, 2005, էջ 150-151), ըստ իրավունքի սկզբունքներում արտացոլվող հասարակական կյանքի ոլորտների (Տե՛ս **В.Н. Карташов**, Принципы права. - в кн. Общая теория государства и права. Академический курс в 3-х томах / отв. ред. М.Н. Марченко, 3-ое изд., М., Норма, 2007, էջ 99): Մեկ այլ մոտեցմամբ՝ իրավունքի սկզբունքները բաժանվում են իրավաբանական պրակտիկայի, անհատի իրավական կարգավիճակի, իրավաբանական պատասխանատվության սկզբունքների: Սակայն իրավունքի տեսության մեջ համընդհանուր ձանաչում գտած մոտեցումը դրանց դասակարգումն է ըստ իրավունքի համակարգի բաղադրատարրերի՝ իրավական ինստիտուտների, միջինստիտուտային, իրավունքի ենթաճյուղերի, իրավունքի ճյուղերի, իրավունքի միջճյուղային, ազգային իրավական համակարգերի, առանձին իրավական ընտանիքների, միջազգային իրավունքի սկզբունքների (Տե՛ս **В.Н. Карташов**, Принципы права. - в кн. Общая теория государства и права. Академический курс в 3-х томах / отв. ред. М.Н. Марченко, 3-ое изд., М., Норма, 2007, էջ 102): Այսպիսով, ներպետական իրավունքում իրավունքի սկզբունքների հիմնական տեսակներն են համաիրավական, միջճյուղային, ճյուղային, ենթաճյուղային և առանձին իրավական ինստիտուտների սկզբունքները (Տե՛ս **Скакун О.Ф.** Теория государства и права. (энциклопедический курс). Харьков, Эспада, 2005, էջ 283-285; **Головистков А.Н., Дмитриев Д.А.**, Проблемы теории государства и права. М., изд-во ЭКСМО, 2005, էջ 374-378):

ЭВОЛЮЦИЯ ЗАКОНОДАТЕЛЬНОГО ОБЕСПЕЧЕНИЯ ПЕНИТЕНЦИАРНОЙ ДИФФЕРЕНЦИАЦИИ И ИНДИВИДУАЛИЗАЦИИ НАКАЗАНИЯ

Роза Абрамян

Аспирант кафедры уголовного права ЕГУ

В настоящей статье освещается пенитенциарная дифференциация и индивидуализация исполнения наказания, а также эволюция его фиксации. Под влиянием демократизации общественной жизни, принятия полноценной правовой концепции прав человека, а также в условиях независимости РА одной из правовых реформ стал пересмотр уголовно-исполнительной политики и реформы законодательство.

Также статья направлена на ознакомление с принятым 15 июня 2022 года новым Уголовным кодексом РА, в котором совершенствовалась правовая техника закрепления и правового регулирования принципов уголовного права в уголовно-исполнительном законодательстве.

THE EVOLUTION OF THE LEGISLATIVE PROVISION OF PENAL DIFFERENTIATION AND INDIVIDUALIZATION OF SENTENCING

Roza Abrahamyan

PhD student at the YSU Chair of Criminal Law

The evolution of the legislative provision of penal differentiation and individualization of sentencing the present article highlights the penitentiary differentiation and individualization of the execution of punishments, as well as the evolution of its fixation. Under the influence of democratization of public life, and the adoption of a full legal concept of human rights, as well as under the condition of the independence of the RA one of the legal reforms became the review of the penal policy and the reforms of the legislation. Also, the article aims to introduce the new Penal Code of RA adopted on June 15, 2022 which improved the legal technique of fixing and legal regulation of the principles of penal law in the penal legislation.

Բանալի բառեր – *Քրեակատարողական համակարգ, դատապարտյալների իրավական վիճակ, դատապարտյալների դասակարգում, դատապարտյալնի վերաառնդիականացում*

Ключевые слова – *уголовно-исполнительная система, правовой статус осужденных, классификация осужденных, ресоциализация заключенных*

Key words – *penitentiary system, the legal status of prisoners, the classification of prisoners, re-socialization of prisoners*